Լրամշակված նախագիծ
Երկրորդ ընթերցում

Կ-819[4]-22.12.2020-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» 2007 թվականի հոկտեմբերի 22-ի ՀՕ-223-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 17-րդ կետով՝

«17) Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի պատճառաբանված միջնորդությամբ կամ օրենքով սահմանված դեպքերում՝ տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառի իրավախախտումների՝ հակամրցակցային համաձայնությունների, մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահման կամ տնտեսական գործունեության արգելված համակարգման կանխումը կամ բացահայտումը:»:

Հոդված 2. Օրենքի 6-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ մասով՝

«5. Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների կողմից օպերատիվ-հետախուզական միջոցառումների՝ տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառի իրավախախտումների վերաբերյալ արդյունքների, այդ թվում՝ տեղեկությունների, նյութերի և փաստաթղթերի փոխանցումը Մրցակցության պաշտպանության հանձնաժողովին չի հանդիսանում դրանց հրապարակում:»:

Հոդված 3. Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասում «սույն օրենքով սահմանված խնդիրներն» բառերը փոխարինել «իրենց խնդիրները, այդ թվում՝ տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտի իրավախախտումների՝ հակամրցակցային համաձայնությունների, մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահման կամ տնտեսական գործունեության համակարգման կանխումը կամ բացահայտումը,» բառերով և կետադրական նշաններով:

Հոդված 4. Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ կետով՝

«5) Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի կողմից անհրաժեշտ տեղեկությունը անմիջականորեն ձեռք բերելու անհնարինության դեպքում Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի պատճառաբանված միջնորդության հիման վրա աջակցել վերջինիս տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտի իրավախախտումների կանխման կամ բացահայտման գործում՝ իրականացնելով սույն օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված գործողություններ, 14-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ, 8-րդ, 11-րդ և 12-րդ կետերով սահմանված օպերատիվ-հետախուզական միջոցառումներ և դրանց արդյունքները, այդ թվում՝ տեղեկությունները, նյութերը և փաստաթղթերը՝ տրամադրելով Մրցակցության պաշտպանության հանձնաժողովին:»:

Հոդված 5. Օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասը «այլ մարմինների» բառերից հետո լրացնել «, Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի» բառերով և կետադրական նշանով:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից երկու ամիս հետո:

Լրամշակված նախագիծ
Երկրորդ ընթերցում

Կ-819[4]-22.12.2020-ՏՀ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» 2007 թվականի հոկտեմբերի 22-ի ՀՕ-223-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) ~~2-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մասով՝~~

~~«3. Տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտում օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններին, ինչպես նաև նրանց և Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի համագործակցության կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:~~

~~**Հոդված 2.** Օրենքի 3-րդ հոդվածում «ազատությունները,» բառից հետո լրացնել «ազատ տնտեսական մրցակցությունը,» բառերով:~~

~~**Հոդված 3.** Օրենքի~~ 4-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 17-րդ կետով՝

«17) Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի պատճառաբանված միջնորդությամբ կամ օրենքով սահմանված դեպքերում՝ տնտեսական մրցակցության պաշտպանության ~~ոլորտ~~բնագավառի իրավախախտումների՝ հակամրցակցային համաձայնությունների, մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահման~~, անբարեխիղճ մրցակցության գործողության~~ կամ տնտեսական գործունեության արգելված համակարգման կանխումը կամ բացահայտումը:»:

Հոդված 24. Օրենքի 6-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ մասով՝

«5. Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների կողմից ~~Մրցակցության պաշտպանության հանձնաժողովին~~ օպերատիվ-~~-~~հետախուզական

միջոցառումների՝ տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառի իրավախախտումների վերաբերյալ արդյունքումների, այդ թվում՝ տեղեկությունների, նյութերի և փաստաթղթերի փոխանցումը Մրցակցության պաշտպանության հանձնաժողովին բացահայտված՝ տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտի իրավախախտումների վերաբերյալ ողջ տեղեկատվության, այդ թվում՝ նյութերի, նշումների, հեռախոսային ձայնագրությունների և այլ ապացույցների տրամադրումը չի հանդիսանում դրանց հրապարակում:»:

Հոդված 5. Օրենքի 8-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1-րդ մասով՝

«4.1. Տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտի իրավախախտումների բացահայտման կամ կանխման գործում օպերատիվ հետախուզական գործունեություն իրականացնող մարմինները համագործակցում են Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի հետ: Տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտի իրավախախտումների բացահայտման կամ կանխման դեպքերում օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացմանը Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի առաջարկությամբ ներգրավվում են նաև Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի աշխատողները:»:

Հոդված 36. Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասում «սույն օրենքով սահմանված խնդիրներն» բառերը փոխարինել «իրենց խնդիրները, այդ թվում՝ տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտի իրավախախտումների՝ հակամրցակցային համաձայնությունների, մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահման կամ անբարեխիղճ մրցակցության գործողության կամ տնտեսական գործունեության համակարգման կանխումը կամ բացահայտումը,» բառերով և կետադրական նշաններով:

Հոդված 47. Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ կետով՝

«5) Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի կողմից անհրաժեշտ տեղեկությունը անմիջականորեն ձեռք բերելու անհնարինության դեպքում Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի պատճառաբանված միջնորդության հիման վրա աջակցել վերջինիս տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտի իրավախախտումների կանխման կամ բացահայտման գործում՝ իրականացնելով սույն օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված գործողություններ, 14-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 57-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, և 12-րդ և 13-րդ կետերով սահմանված օպերատիվ-հետախուզական միջոցառումներ և դրանց արդյունքները, այդ թվում՝

տեղեկությունները, նյութերը և փաստաթղթերը՝ տրամադրելով Մրցակցության պաշտպանության հանձնաժողովին:»:

Հոդված 5~~8~~. Օրենքի ~~1~~40-րդ հոդվածի~~ը~~ 3-րդ մասը «այլ մարմինների» բառերից հետո լրացնել ~~հետևյալ բովանդակությամբ 7-րդ մասով՝~~

«~~7. Օպերատիվ հետախուզական գործունեություն իրականացնող մարմինները տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտի իրավախախտումների կանխման կամ բացահայտման նպատակով իրավունք ունեն իրականացնելու սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ, 5-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ և 13-րդ կետերով սահմանված միջոցառումները։~~, Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի» բառերով և կետադրական նշանով:

Հոդված 6~~9~~. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից երկու ամիս հետո~~մեկամսյա ժամկետում~~:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ (Կ-819-22.12.2020-ՏՀ-011/1) ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	Նախագծերի փաթեթ	Նախագծերի ուժի մեջ մտնելու ժամկետը սահմանել պաշտոնական հրապարակման օրվանից երկու ամիս հետո՝ հաշվի առնելով փոփոխությունների արդյունքում անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքների ծավալը:	Ընդունվել է, նախագծերի փաթեթում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է

2.	ՀՀ կառավարություն	«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետ	«Տնտեսական պայմաններ» հասկացությունում ներառել նաև գնաճը և գնանկումը, քանի որ դրանք ևս էական պայման են հանդիսանում տնտեսական գործունեության իրականացման համար:	Ընդունվել է, նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է
3.	ՀՀ կառավարություն	«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետ, 12-րդ հոդվածի 2-րդ մաս	Հանել «գործարար շրջանառության սովորույթներ» բառերը՝ վարքագծի կանոնն ավելի հստակ դարձնելու նպատակով:	Ընդունվել է, նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է
4.	ՀՀ կառավարություն	«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի	Լրացնել «կամ իրականացվում է նոր արտադրական գործընթացի միջոցով,	Ընդունվել է, նախագծում կատարվել են համապատասխան	Ընդունվել է

		նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետ	այդ թվում՝ նոր տեխնոլոգիայով», քանի որ նորարարությունը կարող է վերաբերել նաև ապրանքի ձևավորման, արտադրության գործընթացին կամ տեխնոլոգիային:	փոփոխություններ:	
5.	ՀՀ կառավարություն	«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մաս	Լրացնել «այդ տնտեսվարող սուբյեկտների հասույթի չափը, կամ» բովանդակությամբ 4-րդ կետով, քանի որ տնտեսվարող սուբյեկտի հասույթի չափը ևս կարող է վկայել բանակցային ուժեղ դիրք ունենալու մասին:	Ընդունվել է, նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է
6.	ՀՀ կառավարություն	«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի	Հանել 6-րդ կետը, 9-րդ կետի «գ», «դ», «ժ» ենթակետերը, իսկ նույն կետի «է»	Ընդունվել է, նախագծում կատարվել են համապատասխան	Ընդունվել է

		նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մաս	ենթակետը լրացնել «օրենսդրությամբ» բառից հետո լրացնել «կամ պայմանագրով» բառերով՝ կրկնություններից խուսափելու և բանակցային ուժեղ դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների գործունեությունն ավելի ճկուն դարձնելու նպատակով:	փոփոխություններ:	
7.	ՀՀ կառավարություն	«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մաս	Համակենտրոնացման թույլատրումը պարզեցված կարգով իրականացնելու հնարավորություն նախատեսել նաև անձանց խմբում ընդգրկված տնտեսվարող սուբյեկտների համակենտրոնացման	Ընդունվել է, նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է

			դեպքում:		
8.	ՀՀ կառավարություն	«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող օրենքի 90-րդ հոդվածի 2-րդ մաս	Հանձնաժողովի արգելանք դնելու լիազորություն տալ միայն պատճառաբանված որոշմամբ:	Ընդունվել է, նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է
9.	ՀՀ կառավարություն	«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող օրենքի 92-րդ հոդվածի 2-րդ մաս	Չբացառել նախազգուշացումը տնտեսվարող սուբյեկտների համար որպես պատասխանատվության միջոց միայն 88-րդ հոդվածով նախատեսված արագացված վարույթի կիրառման դեպքում ընտրելու հնարավորությունը, քանի որ հնարավոր են դեպքեր, երբ տնտեսական կամ այլ	Ընդունվել է, նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է

			հանգամանքների հաշվառմամբ նպատակահարմար չլինի տուգանել տնտեսվարող սուբյեկտին:		
10.	ՀՀ կառավարություն	«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդված	Հոդվածով նախատեսված կարգավորումները հանել նախագծից՝ դրանցով սահմանվող լիազորությունների իրականացման կապակցությամբ հնարավոր խնդիրներից խուսափելու նպատակով:	Ընդունվել է, նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է
11.	ՀՀ կառավարություն	«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին օրենքի նախագծի 1-ին և 4-րդ հոդվածներ	Հոդվածով նախատեսված կարգավորումները հանել նախագծից՝ նման կարգավորումների անհրաժեշտության բացակայության	Ընդունվել է, նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է

			պատճառով:		
12.	ՀՀ կառավարություն	«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին օրենքի նախագծի 7-րդ հոդված	Նվազեցնել տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտի իրավախախտումների կանխման կամ բացահայտման նպատակով իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների ցանկը՝ Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի լիազորությունների հետ կրկնությունը բացառելու նպատակով:	Ընդունվել է, նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է
13.	ՀՀ կառավարություն	«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի	Համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 9-րդ,	Ընդունվել է, նախագծում կատարվել են համապատասխան	Ընդունվել է

		1-ին հոդված, նույն հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող օրենքի 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ, 16-րդ, 20-րդ, 21-րդ, 24-րդ, 25-րդ, 26-րդ, 29-րդ, 30-րդ, 31-րդ, 33-րդ, 37-րդ, 39-րդ, 45-րդ, 50-րդ, 51-րդ, 53-րդ, 58-րդ, 59-րդ, 60-րդ, 62-րդ, 64-րդ, 65-րդ, 68-րդ, 70-րդ, 72-րդ, 73-րդ, 78-րդ, 79-րդ, 83-րդ, 87-րդ, 90-րդ, 93-րդ, 94-րդ, 96-րդ, 99-րդ, 101-րդ, 103-րդ հոդվածներ, ինչպես նաև նույն օրենքի 2-րդ հոդված, «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 2-9-րդ հոդվածներ, «Իրավաբանական անձանց	10-րդ, 14-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ, 18-րդ հոդվածների պահանջներին, ինչպես նաև շտկել անհամապատասխանությունները:	փոփոխություններ:	

		պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 7-րդ հոդված, «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի վերնագիր և 1-ին հոդված,			

		«Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված:			
14.	ՀՀ կառավարություն	«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագիծ	Նախագիծը հանել փաթեթից՝ դրանով սահմանված կարգավորումների անհրաժեշտության բացակայության պատճառով:	Ընդունվել է, նախագիծը հանվել է նախագծերի փաթեթից:	Ընդունվել է
15.	ՀՀ ԱԺ պատգամավոր Գևորգ Պապոյան	«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետեր	«Չորս» բառը փոխարինել «վեց» բառով, իսկ «մեկ միլիարդ հինգ հարյուր հազար» բառերը փոխարինել «երկու միլիարդ հինգ հարյուր հազար» բառերով՝ պայմանավորված այն հանգամանքով, որ չորս առևտրային օբյեկտ ունենալու կամ	Ընդունվել է մասնակի: Իրացման տարեկան շրջանառության շեմը սահմանվել է երեք միլիարդ դրամ: Այդ չափով տարեկան շրջանառություն և չորս առևտրային	Ընդունվել է մասնակի

			մեկ միլիարդ հինգ հարյուր հազար դրամ տարեկան հասույթ ունեցող սուբյեկտները ներկայիս շուկայական պայմաններում չեն կարող ունենալ բանակցային ուժեղ դիրք և շուկայում չեն կարող թելադրել հակամրցակցային կամ այլ պայմաններ և այդ ընկերությունները չեն կարող հակամրցակցային գործողություններ ծավալել, որոնք էական վնաս կհասցնեն շուկային և տնտեսությանը:	օբյեկտ ունեցող տնտեսվարող սուբյեկտը արդեն իսկ կունենա հնարավորություն համապատասխան ապրանքների մուտքը ապրանքային շուկա ապահովելու կամ ազդելու տնտեսական գործունեության ընդհանուր պայմանների վրա:	
16.	ՀՀ ԱԺ պատգամավոր Գևորգ Պապոյան	«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ	«Տասը» բառը փոխարինել «հինգ» բառով՝ պայմանավորված այն հանգամանքով, որ իրավախախտման	Ընդունվել է, նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է

		շարադրվող օրենքի 95-րդ հոդվածի 1-ին մաս	կատարման վաղեմության ժամկետի 10 տարի հատվածը գործարարների համար համարվում է ներդրումային գրավչությունը նվազեցնող գործոն:		
17.	ՀՀ ԱԺ պատգամավորներ Բաբկեն Թունյան և Գևորգ Պապոյան	«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մաս	Հստակեցնել արգելված պետական օժանդակություն ստացած տնտեսվարող սուբյեկտի կողմից պետական օժանդակության վերադարձման դրույթները:	Ընդունվել է, նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է
18.	ՀՀ ԱԺ պատգամավորներ Բաբկեն Թունյան և Գևորգ Պապոյան	«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող օրենքի 5-րդ	Շտկել այդ մասում նույն հոդվածի 8-րդ մասին կատարված հղումը, քանի որ այն վերաբերում է նույն հոդվածի 9-րդ մասին:	Ընդունվել է, նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է

		հոդվածի 1-ին մաս			
19.	ՀՀ ԱԺ պատգամավորներ Բաբկեն Թունյան և Գևորգ Պապոյան	«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետ	Շարադրել նոր պարբերությամբ:	Ընդունվել է, նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է
20.	ՀՀ ԱԺ պատգամավորներ Բաբկեն Թունյան և Գևորգ Պապոյան	«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետ և 35-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետ	«Դատավորի» բառից հետո լրացնել «պաշտոնում» բառը:	Ընդունվել է, նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է
21.	ՀՀ ԱԺ պատգամավորներ Բաբկեն Թունյան և Գևորգ Պապոյան	«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով	Ուղղել վրիպակը՝ «նշանակվում է» ձևակերպումը փոխարինել «նշանակվում են»	Ընդունվել է, նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է

		նոր խմբագրությամբ շարադրվող օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մաս	ձևակերպմամբ:		
22.	ՀՀ ԱԺ պատգամավորներ Բաբկեն Թունյան և Գևորգ Պապոյան	«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող օրենքի 63-րդ հոդվածի 3-րդ մաս	Օրենսգրքի անվանման մեջ «ՀՀ» բառը փոխարինել «Հայաստանի Հանրապետության» բառերով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի պահանջները:	Ընդունվել է, նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է
23.	ՀՀ ԱԺ պատգամավորներ Բաբկեն Թունյան և Գևորգ Պապոյան	«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող օրենքի 90-րդ հոդվածի 3-րդ մաս, 5-րդ մասի 1-ին կետ, 100-րդ հոդվածի 2-րդ մաս	Օրենքներին կատարվող հղումներից հանել «Հայաստանի Հանրապետության» բառերը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի	Ընդունվել է, նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է

			պահանջները:		
24.	ՀՀ ԱԺ պատգամավորներ Բաբկեն Թունյան և Գևորգ Պապոյան	«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդված	«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքի 1-ին հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերությունն ուժը կորցրած ճանաչելու հետ միասին փոփոխություն կատարել նաև 1-ին պարբերության մեջ, մասնավորապես 1-ին պարբերությունից հանել «բացառությամբ սույն մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված արտագնա ուսումնասիրությունների» ձևակերպումը՝ անհասցե հղումը	Ընդունվել է, նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է

			բացառելու նպատակով:		
25.	ՀՀ ԱԺ պատգամավորներ Բաբկեն Թունյան և Գևորգ Պապոյան	«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդված	3-րդ հոդվածում նշված պարբերություններում ոչ թե փոփոխություն կատարել, այլ լրացում, մասնավորապես օրենքի 3-րդ հոդվածի 1.1-ին մասի 1-ին պարբերությունում, 2-րդ մասի 1-ին պարբերությունում, 4-րդ մասի 2-րդ պարբերությունում և 6-րդ հոդվածի 1-ին մասում «նյութական» բառից առաջ լրացնելով ստորակետ կետադրական նշանը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի պահանջները:	Ընդունվել է, նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է

26.	ՀՀ ԱԺ պատգամավորներ Բաբկեն Թունյան և Գևորգ Պապոյան	«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդված	Շտկել հոդվածով առաջարկվող փոփոխությունների և «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենք 8-րդ հոդվածի 4-րդ մասի միջև առկա հակասությունը:	Ընդունվել է, հոդվածով նախատեսված կարգավորումը հանվել է նախագծից:	Ընդունվել է
27.	ՀՀ ԱԺ պատգամավորներ Բաբկեն Թունյան և Գևորգ Պապոյան	«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ	Հոդվածների համարակալումը ճիշտ նշել՝ տրամաբանական հերթականությունը պահելու համար, մասնավորապես կրկնվում է 3-րդ հոդվածը:	Ընդունվել է, նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է
28.	ՀՀ ԱԺ պատգամավորներ Բաբկեն Թունյան և Գևորգ Պապոյան	««Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 5-	«4.1-րդ» թիվը փոխարինել «4.1-ին» ձևակերպմամբ:	Ընդունվել է, նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է

		րդ հոդված			
29.	ՀՀ ԱԺ պատգամավորներ Բաբկեն Թունյան և Գևորգ Պապոյան	«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 6-րդ հոդված	«Բառերով» բառից հետո լրացնել «և կետադրական նշաններով» բառերով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը:	Ընդունվել է, նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է
30.	ՀՀ ԱԺ պատգամավորներ Բաբկեն Թունյան և Գևորգ Պապոյան	«Կենտրոնական բանկի մասին» օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդված	«7.1-րդ» թիվը փոխարինել «7.1-ին» թվով:	Ընդունվել է, նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է
31.	ՀՀ ԱԺ պատգամավորներ Բաբկեն Թունյան և Գևորգ Պապոյան	«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված	Հստակեցնել օրենսգրքի 86-րդ հոդվածի 2-րդ մասում լրացվող նոր 7-րդ կետը, որով շարադրված պարբերությունն ունի անհասկանալի բովանդակություն:	Ընդունվել է, նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է

32.	ՀՀ ԱԺ «Լուսավոր Հայաստան» խմբակցություն	«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ	Սահմանափակել օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններին դիմելու հնարավորություն նախատեսող դեպքերը:	Ընդունվել է, նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է